

Զօրութեամբ զէ՛, եւ ուժով
 զէ՛, հապա իմ Հոգւովս, կ'ը-
 սէ զօրաց Տէրը. Զաք. Գ. 6 :
 Երանի ան ամենուն, որոնք
 Անոր կը յուսան. Սաղ. Բ. 12
 Տէրը Մեր ԱՐԳԱՐՈՒԹԻՒ-
 ՆԸ. Երեմ. Ի. 6 :

ԲԱՆԲԵՐ

ՀՈԳԵՒՈՐ ԱՄՍԱԹԵՐԹ
 ԱՄԵՆՈՒՆ ՀԱՄԱՐ

Վասնզի մի՛ չք երեւցած բա-
 ներուն զենք սայիր, հապա զե-
 րեւցածներուն. ինքու որ երեւ-
 ցած բաները ժամանակաւոր
 են, չո՛ց զերեւցածները՝ յա-
 ւիտ աւական : Բ. Կոր. Գ. 18 :
 Ուրեմն արթուն կեցէք, վա-
 անզի զէք գիտեր թէ ո՛ր ժա-
 ման ձեր Տէրը կուգայ. Մատ.
 Ի. 42 :

“ PANPÈRE ” REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE
 Բաժնեգին տարեկան.—Ֆրանսա եւ Սուրիա 5 ֆր. Պալքանեան երկիրներ 1 շիլ. ուրիշ երկիրներ 1,50 շիլ
 Rédacteur H. N. Ghazarossian, 29, Rue Fauchier — Marseille (France)

ԹԻԻ 1

Գ. ՏԱՐԻ

1 ԱՊՐԻԼ 1927

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Գ. ՏԱՐԵՄՈՒՏԻ ԱՌԹԻԻ

Այսօր փառք կուտանք ամէն բարիքներու
 Հօրը մեր Տէրը, որ մեզի օգնեց «Բանբեր»ի երկ-
 րորդ տարին եւս փակելով՝ ուրախութեամբ եւ
 յուսալից Գ. տարին ընդգրկել։ Անցեալ տարուան
 մէջ հարիւրէ աւելի նամակներ ընդունած ենք,
 որոնք կը հաստատեն թէ մեր հաւատքով սկսած
 այս պոլտիկ գործը օգտակար եղաւ իր դացած
 տեղերը եւ որոնք մեզ կ'ամրապնդեն այն վստա-
 հութեան վրայ թէ այս ձեռնարկը Տէրը մէջն էր
 եւ Անով յառաջ պիտի երթայ։

Ուրախ ենք Տէրը մով, որ նա կարելիութիւն
 տուաւ մեզի այն պղտիկ պարբերականով հասնիլ
 այնպիսի տեղեր, ուր նա կը ծառայէ իբրեւ միակ
 հոգեւոր մխիթարիչ։ Աղօթքով պատրաստած
 ենք բոլոր յօդուածներն ու պատմութիւնները,
 նոյնպէս աղօթքով յանձնած ենք ազգայրութեան
 եւ թղթատարութեան պատրաստուած ծրարները.
 եւ դեռ միշտ խնդրած ենք որ Տէրը ինք ըլլայ
 սրտեր պատրաստող «Բանբեր»ի բերած պարզ
 պատգամներուն համար, որպէսզի անոնց միջո-
 ցաւ ինք փառաւորուի։

«Բանբեր»ը 23 տարբեր երկիրներ մուտ գտած
 է թէ հին եւ թէ նոր աշխարհի մէջ։ Այս անցեալ
 տարուան միջոցին մեր ահնկալածէն պակաս եւ
 սակայն նորէն 500 է աւելի նոր բաժանորդներ
 հաւաքուեցան «Բանբեր»ի ընտանիքին շուրջ։

Պարբերականս իր համետ բաժնեգիրնովը
 ընականաբար առաջին տարին չէր կրնար իր
 ծախքերը փոցել, այս տարի մասամբ մը անցեալ
 տարին աւելի մխիթարական եղած է եւ յոյս
 ունինք որ գալ տարի աւելի լաւ պիտի ըլլայ։

Այս տարի դարձեալ նոյն գնով պիտի շարուն-

նակենք «Բանբեր»ը, տարեկան 5 ֆրանք Ֆրան-
 սայի եւ Սուրիոյ համար, 1 շիլին կամ 8 ֆրանք
 Պալքանեան երկիրներու համար, 1,50 շիլին կամ
 40 սէնթ արտասահմանի համար։

Կարգ մը դժուարութիւններ յարգելու նպա-
 տակով՝ սրտած ենք այս տարի ամէն երեք
 շաբաթը անգամ մը հրատարակել եւ այսպէս
 տարուան տաճարեկու թիւ «Բանբեր»ները
 ինը ամսուան մէջ լրացնել, որով կարող պիտի
 ըլլանք Տէրը կամքովը Գ. հատորը 1928 տար-
 ուան Յունուար 1 ին սկսիլ։

Արդ՝ խմբագրութիւնս իր եզրայրական ող-
 չոյններուն հետ միասին հետեւեալ խնդրանք-
 ները կը ներկայացնէ «Բանբեր»ի ընտանիքին. —

Ա. Սիրելի «Բանբեր»ին նիւթական յաջողու-
 թեան համար առաջին պատահութեամբ զրկէ
 բաժնեգիրնդ։

Բ. Երբ այս տարուան առաջին թիւը ձեռքդ
 կ'առնես, մտածէ թէ արդեօք ծանօթներուդ մէջ
 քանինե՞ր կային, որոնք անցեալ մէկ կամ
 երկու տարիներուն մէջ «Բանբեր»էն զրկուեցան
 քու անտարբերութեանդ կամ գանցառութեանդ
 պատճառաւ։ Թերեւս՝ անոնք արթննային, ա-
 պաշխարէին «Բանբեր»ի միջոցաւ։ Եթէ ունիս
 այսպիսի անձնաւորութիւններ մտքիդ մէջ,
 առանց սպասելու զրէ անոնց անունները խմբա-
 գրութեանս, որ պատրաստ է անմիջապէս թերթ
 զրկելու։

Գ. Նոր տարուան առաջին թիւը երբ ձեռքդ
 առնես, վերջիշէ այն բոլոր օրհնութիւնները զորս
 փայլեցիր այս թերթիկին միջոցաւ։ Թերեւս
 յաճախ աղօթեցիր խմբագրութեան համար, ա-
 ղթեցիր որ Բանբերը ուրիշներուն ալ օրհնա-

բեր լինի, հաճէ սոյն նուիրական պարտականութիւնդ դարձեալ կատարել, վասնզի մենք կըզգանք անոր գորութիւնը եւ վստահ ենք թէ ուրիշ ընթերցողներ ալ այսպէս կընան վկայիլ :

Եւ խաղաղութեան Աստուածը, որ մեռելներէն յարուց մեր Տէր Յիսուսը, որ յաւիտեական ուխտին արիւնովը ոչխարներուն մեծ Հովիւն է, քեզ ամէն բարի գործի մէջ հաստատէ իր կամքը ընելու, եւ քու մէջ իր առջեւ հաճոյ եղածը ընէ Յիսուս Քրիստոսի ձեռքով, որու փառք յաւիտեանս յաւիտենից : Ամէն : (Եբր. ԺԳ. 20-24) :

ԱՅՏՈՒԱԾ ԱՄԷՆ ԲԱՆԻ ՄԷՋ Է

Ամէն բանի մէջ զԱստուած տեսնելու դժուարութիւնը մեզի համար աներկ ներքին կեանք մը վարելու ամենէն մեծ արգելքներէն մին է : Մարդիկ կ'ըսեն. «Ինծի զիւրին է Աստուծէ եկածին հպատակիլ, սակայն մարդոց չեմ կրնար հպատակիլ ու իմ փորձութիւններուս ու խաչերուս մեծագոյն մասը մարդոցմէ կուգայ» : Ուրիշներ կ'առարկեն՝ «Աստահութեան վրայ խօսիլը ապէկ է ու զիւրին, բայց իմ խնդիրս Տէրոջը յանձնելէ վերջ, գիտեմ թէ մարդիկ մէջ մտնելով ամէն բան պիտի խառնակեն. ինծի զիւրին է Աստուծոյ վստահիլ, սակայն մարդոց վստահելու մէջ ծանր արգելքներու կը հանդիպիմ» :

Ասիկա երեւակայական դժուարութիւն մը չէ. խիստ կարեւոր խնդիր մըն է ու եթէ կարելի չըլլայ դոյն վերցնել, հաւատքի կեանքը իրօք անկարելի, ցնորական եւ վերացական բան մը կը դառնայ : Մեր կեանքի գրեթէ բոլոր պարագաներուն ու ղէպքերուն մէջ մարդիկ գործ կ'ունենան եւ մեր փորձութիւններուն մեծ մասը մարդոց սխալմունքներէն, սպիտութիւնէն, անհոգութիւնէն կամ մեղքէն յառաջ կուգայ : Մենք գիտենք թէ այս կարգի փորձութիւնները անկարելի է որ Աստուծմէ ծագում առած ըլլան. ուստի ի՞նչպէս կրնանք ասոնց նկատմամբ ալ «Բու կամքդ ըլլայ» ըսել Աստուծոյ, քանի որ Ան ասոնց մէջ մաս ու բաժին չունի :

Ի՞նչ օգուտ ունի նաեւ մեր խնդիրները Տէրոջը յանձնել, քանի որ մարդիկ թոյլտուութիւն ունին վերջապէս ասոնց մէջ մտնելու եւ զանոնք խառնակելու : Եւ ի՞նչպէս կարելի է հաւատքի մէջ ապրիլ քանի որ մարդոց գործերը այսպէս ծանր ազդեցութիւններ կը ձգեն մեր վրայ :

Սակայն տակաւին ասկէ աւելին կայ : Այն խնդիրները որոնց մէջ Աստուծոյ ձեռքը կը տեսնենք, իրենց մէջ կը պարունակեն քաղցրութիւն

մը որով վերաւորուելու միջոցին նաեւ կը մխիթարուինք, մինչ մարդոց մեզի հասցուցած փորձութիւնները դառնութեամբ լեցուն են :

Ուրեմն մեզի պէտք եղածը Ամէն բանի մէջ զԱստուած տեսնել ու ամէն ինչ Անոր ձեռքէն ընդունիլ է : Կատարեալ նուիրման ու լման վստահութեան հասնելու համար նախ այս կէտը ըմբռնելու ենք :

Արդ մեզի ներկայացած հարցումն է՝ «Իրօք Աստուած ամէն բանի մէջ է» : Սուրբ Գիրքը սրեւէ կերպով մեզի կ'երաշխաւորէ՝ թէ ամէն ինչ Անոր ձեռքէն առնելու ենք : Այո, Աստուծոյ զաւակի մը հանդիպած բոլոր դժուարութիւնները անոր Երկնային Հօրմէն կուգան, հոգ չէ թէ ով կամ ինչ ալ գործակցած ըլլայ ասոնց երեւութապէս :

Սուրբ Գիրքի ամբողջ վարդապետութիւնը կը հաստատէ այս ճշմարտութիւնը : «Ճնշուկ մը գետին չիյնար առանց մեր Հօրը. (Մատթ. Ժ. 29) :

Մեր գլխուն բոլոր մագերը համրուած են. (Մատթ. Ժ. 30) :

Մեր անձին համար վրէժխնդիր ըլլալու չենք. քանի որ մեր Հայրը մեր պաշտպանութիւնը Իր ձեռքը առած է. (Հռովմ. ԺԲ. 49) :

Ոչ մէկը կրնայ մեզի հակառակ ըլլալ քանի որ Ինք մեր կողմն է. (Հռովմ. Ը. 34) :

Երբոր ջուրերէն անցնինք մեզ պիտի չկոխեն, երբոր կրակի մէջէն քալենք, պիտի Հայրինք, քանզի Ինք մեզի հետ ըլլալ կ'ուզէ. (Ես. ԽԳ. 2) :

Ասիկա առիւծներուն բերանը կը բռնէ որ չկրնան մեզի վնասել. (Դան. 2. 22) :

Ատենները ու ժամանակները փոխողը, թագաւորներ վերցնողը ու թագաւորներ դնողը Ասիկա է. (Դան. Բ. 24) :

Թէ որ գաւառի մէջ աղքատին եղած զրկանքը ու իրաւանց ու արդարութեան ծուրիլը տեսնես, աս բանիս վրայ մի գարմանար, վասն զի բարձրերուն վրայ բարձր եղողը կը տեսնէ, եւ ասոնցմէ բարձրը կայ : (Ժող. Ե. 8) :

Բաւական սեպեցէք որչափ բան որ ձեռքերնիդ կայ, ինչու որ ինքը զրուցեց թէ «Բնաւ քեզ պիտի չթողում ու բնաւ քեզ երեսէ պիտի չձգեմ». անանկ որ համարձակ ըլլանք ըսելու, Տէրը իմ օգնականս է, ու ես պիտի չվախնամ, մարդը ինծի ի՞նչ պիտի ընէ. (Եբր. ԺԳ. 5-6) :

Այս եւ ասոնց նման շատ մը համարներ մշտնջենապէս կը լուծեն հարցը : Մեզի ոչ մէկ բան կը հանդիպի առանց մեր Հօր կամքին կամ

Թոյլտուութեան : Խնդիր մը կրնայ մարդոց մեղքէն ծագում առած ըլլալ եւ չենք կրնար ըսել թէ անիկա ինքնին Աստուծոյ կամքն է, սակայն անոր մեղի հասած վայրկեանին անիկա մեղի համար Աստուծոյ կամքը կ'ըլլայ եւ գոյն ուղղակի Աստուծոյ ձեռքէն ընդունելու ենք : Ոչ մէկ մարդ, ոչ մէկ մարդկային ընկերութիւն եւ ո'չ ալ երկիրքի ու երկրի մէկ գորութիւն կարող է զայլիլ Քրիստոսի մէջ բնակող հոգիին առանց նախ Քրիստոսի մէջէն անցած եւ Աստուծոյ թուրտութեան կնիքը ստացած ըլլալու : Եթէ Աստուծոյ մեղի հետ է, ով որ կ'ուզէ թող հակառակի մեղի, մեղի վնաս մը չկրնար հասնիլ, ի բաց առեալ եթէ Աստուծոյ գոյն մեղի համար լաւ սեպէ եւ անոր ճամբայ բանայ :

Ասոր մէկ օրինակը կրնայ սեպուիլ ծնողաց հոգածութիւնը իրենց անօգնական զաւակներուն հանդէպ : Հօր մը բազուկներուն մէջ հանգչող մանուկին չկրնար փորձանք մը հասնիլ որչափ ատեն որ հայրը փորձանքին դիմադրելու ուժը ունի եւ նոյնիսկ երբոր անոր ուժը ապառի, փորձանքը նախ հօրը կը հասնի եւ յետոյ մանուկին : Եթէ երկրաւոր հայր մը այսպէս կը հոգայ իր անօգնական զաւակը, որչափ աւելի պիտի հոգայ մեր երկնաւոր Հայրը, որուն սէրը անբաղդատելիօրէն աւելի է ու որուն գորութիւնն ու իմաստութիւնը չեն կրնար ամօթահար ըլլալ : Աստուծոյ իր զաւակներուն հանդէպած ամէն մէկ կէտ ուշադրութեան կ'առնէ եւ իր հաճելի կամքին համաձայն կ'առաջնորդէ : Այս ճշմարտութիւնը լուսարանող անթիւ օրինակներ ունինք : Առնենք Յովսէփը : Ի՞նչ կրնայ աւելի մեղքի արգիւնք եւ Աստուծոյ կամքին դէմ ապստամբութիւն նկատուիլ քան անոր դիւրութեան ծախուիլը : Սակայն ի՞նչ կ'ըսէ Յովսէփ ասոր նկատմամբ : Թէպէտեւ դուք ինծի դէմ չարութիւն խորհեցաք, բայց Աստուծոյ ան աղէկի դարձնել խորհեցաւ : Հիմա մի՛ վախնաք ու մի խորհիք թէ ես ձեզի կը բարկանամ զիս ծախած ըլլալնու համար, քանզի Աստուծոյ ձեռք կեանքին համար զիս ձեզմէ առաջ հոս զրկեց : Բանականութիւնը կ'ըսէ թէ Յովսէփը Եզրայոսս զրկողը անոր չար եղբայրներն էին, սակայն Յովսէփի հաւատքի աչքով խնդրոյն նայելով կ'ըսէ. «Աստուծոյ զիս զրկեց» : Եղբայրներուն ըրածը անտարակոյս ծանր մեղք մըն էր, սակայն Յովսէփին համար Աստուծոյ կամքը եւ անոր կեանքին ամենէն մեծ օրհնութիւնն էր : Հոգ չէ թէ ան ծախուած պահուն այսպէս չէր մտածեր :

Ուրեմն կը տեսնենք թէ ինչպէս Աստուծոյ կարող է ուրիշներուն բարկութիւնն իսկ Իր փառքին համար գործածել եւ թէ ինչպէս ուրիշներուն մեղքերն իսկ զԱստուծոյ սիրողներուն համար բարի գործակից կ'ըլլան : (Շար.)

Գ Ա Ն Ա Մ Օ Ր Ի (ՃԱՅՈՒՆՈՅԻ ՊՍՏՈՒՆԵԼԻ ՄԸ)

Այս կեանքի պատմութիւնը որպէս բանաստեղծութիւն տրուած է Ուէսթ Բրնսդըի մէջ (Լոնտոն) 12 ցունիս 1925 ին .

Իմ անձնական անառակ կեանքիս պատմութիւնն է որ ձեզի պիտի պատմեմ, ոչ թէ առակին անառակ որդիին : Բաւական երկար տարիներ իմ երկնաւոր Հօրս անառակ որդին էի, Ասոր ճոխութեան փառքէն զրկուած :

Թէ ի՞նչպէս ճարտարական խաւար կրօնքէն Քրիստոսի փառաւոր լոյսին առաջնորդուեցայ, թէ ի՞նչպէս նորէն յետագիմութիւնն ունեցայ զէպի հին կեանքը եւ թէ ի՞նչպէս կրկին Փրկիչս գտայ ու Ասոր խոնարհ մէկ ծառան եղայ :

— ԳԼՈՒԽ Ա. —

Կեանքիս երեք շրջանները իրենց մէջ կը պարունակեն ճարտն գանուող Աւետարանական մշտնադրութեանց պատմութիւնները : Ես ճաբոնի քրիստոնեաներուն ամէնէն հինն եմ : 30 տարի ազաջ ճէյնս հարիւրապետի մը միջոցաւ գարձի եկայ : Այս մարդը 1870 ին Ամերիկայէն ծագող եկած էր. նա հասարակաց զարդի մը մէջ ուսուցչապետ եղաւ, ուր ես ալ կ'ուսանէի : Այս մարդը Կենդանի քրիստոնեայ մ'էր եւ իր կիսն ալ ազօթքի կիսն մը :

Հարիւրապետ ճէյնս սկիզբէն ճարտիւրէն չի գիտնալուն համար աշակերտաց մէջ հոգեւոր գործ չէր կրնար տեսնել : Ամերիկացուց համար շատ դժուար էր ճարտիւրէն սորվիլ եւ ճաբոնացուց համար ալ անգլիկէն սորվիլը : Բայց երբ իր աշակերտաց հետ բաւական կրցաւ գաղափար փոխանակել, այն ատեն մեզի հետ սկսաւ Քրիստոսի նկատմամբ խօսիլ : Ամէն շաբաթ իրիկուն իր տունը Աստուծոյ շունչը ուսանելու կ'երթայինք : Սկիզբէն լոկ հետաքրքրութեան համար կը յաճախէինք : Ան Ս. Գիրքը ուսուցանելու մասնաւոր ձեռք մ'ունէր : Բացատրութիւններ չէր տար ոչ ալ կը վիճէր : Նախ մեզմէ պահանջեց Ս. Գիրքէն մասնաւոր մասեր գոց սորվիլ : Օր. Յովհ. Դ. 1-18, Գ. 1-24 : Առանց իմաստն հասկնալու կը սորվէինք : Յիսուսի հաւատարմէն ետքն էր որ մեր աչքերը բացաւ եւ Աստուծոյ խօսքը մեզի հասկցուց :

Աստուծոյ շունչը մեզի համար հետաքրքրական գիրք մը դարձաւ, գոյն աւելի ուսանելու կը փափաքէինք բայց ժամանակ չունէինք : Կարգ մը աշակերտներ որոշեցինք որ մեր ձմեռան վաղանձը հարիւրապետ ճէյնսի հետ անցնենք, փոխան ծնողաց քով երթալու : Ուստի ամէն բան մէկդի ձգելով ինքզինքնիս Ս. Գիրքը ուսա-

ներու նուիրեցինք : Ո՛չ ճարտներէն Ս. Գիրք ունէինք եւ ո՛չ ալ Ս. Գրոց բառարան, բայց մենք զայն կը կարդայինք օրնիրուն, միասին կ'ազօթէինք ու Ս. Գիրքը կը լափէինք այնպէս ինչպէս ներկայ երիտասարդութիւնը զգայացունց վէպերը կը կարդան :

Աստուած Ս. Գրոց ուսումը հիանալիօրէն օրհնեց եւ սքանչելի օրհնութիւն մը յառաջ բերաւ զպրոցին մէջ : Այս եղաւ ճարտնի անդրանիկ արթնութիւնը : Մենք այս արթնութիւնէն բան մը չէինք հասկնար, վասնզի չէինք գիտեր թէ քրիստոնէական կրօնքին մէջ այսպիսի բան մը գոյութիւն ունի :

Երկրին այս մասը տակաւին միախնարական որեւէ ազդեցութիւն վայելած չէր : Այս արթնութիւնը պարզ աշխարհական գիտութիւն մը գործնէր, միախնարական ընկերակցութիւնէն բոլորովին անկախ : Ահա կը տեսնենք թէ այսքան խաւար երկրի մը մէջ ինչ կրցաւ ընել պարզ սակայն հոգիով լի, եռանդուն, հոգիներու փրկութեան նախանձաւոր եւ հաւատարիմ զինուորականը :

Թէ ինչպէս տեղի ունեցաւ այս արթնութիւնը : Վարսնձը լրացաւ եւ բոլոր ուսանողները զպրոց վերադարձան եւ մենք զպրոցի մէջ մնացեալներս Ս. Գրքով լեցուած էինք եւ անկարելի էր որ մենք մեր լեցունութիւնէն զանոնք ալ մասնակից չընէինք : Անոնք նախ Ս. Գրքին մասին հետաքրքրութիւն մ'ունեցան եւ քիչ ատենէն սկսան կարդալ զայն ամէն տեղ : Դպրոցը բացուեցաւ, դասերը սկսան ու տաճն ոք կը փափաքէր միայն Ս. Գիրքը ուսանիլ : Այս ուսման փափաքը այնքան բուռն էր որ զպրոցի վարչութիւնը ստիպուեցաւ կանոնաւոր դասերը շարաւթ մը ընդհատել եւ այդ ժամանակը տալ Ս. Գրոց ուսման : Դպրոցը միախնարական զըպրոց մը չէր, այլ պետական հասարակաց զպրոց մը :

Հարիւր երիտասարդներու Աստուծոյ խօսքին ընթերցման եռանդը ոչինչ կարող էր մարել : Մէկ մէկի ետեւէն դարձի կուգային եւ եղան վայրկեաններ երբ մենք հաւատացինք թէ ամբողջ ուսանողները դարձի պիտի դառն եւ եկան ալ : Սկսանք քարոզել մեր անեցիներուն, ծնողաց, բարեկամներու եւ զրացիներու եւ այդ բոլորէն մեր առջեւը բացուեցաւ հալածանքի դռները :

ԺՁ. դարուն մէջտեղն էր որ կաթողիկ միախնարի մը միջոցաւ քրիստոնէութիւնը ճարտնի մէջ մուտ գտաւ : Սկիզբէն ճարտնացիք սիրով ընդունեցին այս կրօնքը ու շուտ մը տարածուեցաւ երկրին մէջ : ԺՁ. դարու վախճանին ճարտնի մէջ 750,000 էն էլի քրիստոնէայ կար : Զիդուիթ միախնարները սովոր էին իրենց առեւտրական երկիրներուն քաղաքականութեան

ալ խառնուիլ : Ճարտնացիք այս կէտին չկրնալով դիմանալ՝ սկսան հալածել քրիստոնէաները եւ վճռուի միախնարները : Այս հալածանքը ստակալի եղաւ եւ 200 տարի տեւեց : Կառավարութիւնը գրեթէ յաջողեցաւ երկրէն քրիստոնէութիւնը արմատախիլ ընել : Անկից վերջը քրիստոնէաները կը նկատուէին իբր զաւաճաններ, վտանգաւոր թշնամիները երկրին :

Հազիւ 5—6 տարեկան կայի, յաճախ պաշտօնական կնիքով կ'ըսուած ազդարարութիւններ կը տեսնէի հոս ու հոն : Ազդարարութիւնն էր «Յիսուսի կրօնքը խառն արգիւտած է» : Նկարներ կոխկոտելու մեծ տօնն ալ ունէին : Այս տօնը՝ կարեւոր տօներէն մին էր : Խաչի եւ խաչեալին նկարները կը զնէին ու զանոնք կը կոխկոտէին : Ով որ այս տօնին մասնակցելը մերժէր, զայն կը ձերբակալէին ու կը բանտարկէին : Մեծ հայրս կառավարական սպայ մ'ըլլալով պաշտօն ունէր տարին անգամ մը ժողովուրդը իր պաշտօնական օֆիսը կանչելու եւ Քրիստոսի մէկ նկարը անոնց՝ սաքին տակը կոխել տալու : Ես ալ անգամ մը այս արարողութեան մասնակցեցայ : Կոխկոտուելիք նկարը կը զըտնուէր շղթայուած երկաթէ տուփի մը մէջ : Տեղացին բարձր պաշտօնեաները իրենց սուրբոյն ու նիղալներովը կեցած՝ իսկ մարդիկ մէկիկ մէկիկ նկարին կը մօտենային կը կոխկոտէին ու կ'անցնէին : Մեծ հայրիկիս հարցուցի, այս կոխկոտուած տուփին մէջ ի՞նչ կայ : Ան ըսաւ, «Ո՛հ ապականած ջնջին որդ մը կայ, որ եթէ շղթայուած երկաթէ տուփին մէջ չըլլար եւ չկոխկոտուէր, դուրս պիտի սպրդէր եւ մեր ամբողջ հայրենիքին վտանգ պիտի սպառնար» : Ահա իմ առաջին հանդիպումս իսաչին :

Այս դէպքէն տասը տարի վերջն էր որ Յիսուս Քրիստոսի աշակերտն եղայ իմ ընկերներէս կարեւոր մէկ թուոյն հետ : Երեւակայեցէք մեր ծնողաց սարսափը, ի տես իրենց զաւակաց աս զգուշիկ եւ ատելի կրօնքին թիւն ու թիկունք ըլլալը : Հալածանքը այս անգամ պայթեցաւ ոչ թէ կառավարութիւնէն այլ ծնողաց կողմէն : Կէսէն աւելին այս հալածանքին չդիմանալով ձգեցին Ս. Գիրքը եւ վերադարձան իրենց հին կրօնքին : Հալածանքը զպրոցի շարժումը յաջողեցաւ դադրեցնել, բայց 40 երիտասարդներ իրենց հաւատքին մէջ հաստատ մնացին հակառակ ամէն չարչարանքի : Կէս դար անցած է այն օրէն երբ հարիւրապետ ձէյնսի հետ պզտիկ բուրձ մը վեր կը մաղցէինք 40 քրիստոնէայ աշակերտներով միասին : Այս բուրձը Ծաղկանց լեռ կը կոչուէր : 40 տղաքս հսկայ մայրի ծառի մը ընդարձակ ճիւղերուն շուքին ներքեւը անձնանուիրման պաշտամունք մ'ունեցանք : Դաւանադիր մը պատրաստեցինք, աս խօսքերով,

«Այսօր մենք զմեզ կը նուիրենք Աստուծոյ ծառայութեանը. մենք կ'որոշենք քարոզել Յիսուս Քրիստոսի Աւետարանը Ճաբոնի ամէն կողմերը» եւ յետոյ բոլորս ալ ստորագրեցինք դայն :

«Խաչս առած, կ'ուզեմ քեզ հետեւիլ, Յիսուս Փրկիչս եւ Թագաւորս, Արքայ ատեալ, չեմ ուզեր ապրիլ, ատուած ամէնէն, բայց միայն Քեզ համար» : Այս երգը վառուած զգացումներով կ'երգէինք լեռան վրայ : Մենք ամենուռն ատելի դարձած էինք, մեր տուններէն վռնուուած : Մեր փառասիրութեան էն լաւերը պէտք էր լքէինք որպէսզի աշխարհի մէջ մեծ դեր մը կատարէինք, պէտք էր որ ինքզինքնիս խոնարհեցնէինք Յիսուսի հետեւելու եւ Իր խաչը կրելու համար :

Մեզ զպրոցէն հանեցին եւ մեր տուններուն մէջ բանտարկեցին եւ մեզմէ սմանքս ալ սուկալի տանջանքներու ենթարկեցին : Զիս անոնց զխաւարներէն մին համարելով տունէս հեռու ուրիշ տեղ մը աքսորեցին ինձմէ կողոպտելով բոլոր հոգեւոր գրքերս եւ Ս. Գիրքս, սակայն ես ճարտիկօրէն կրցի Մատթէոսի եւ Յովհաննու Աւետարանները հանդերձիս ներքեւ սպրդեցնել : Աքսորավայրիս մէջ անոնք իմ անբաժան ընկերներս էին : Երկու Աւետարաններն ալ ծայրէ ծայր դոց սորվեցայ, այնպէս որ եթէ անոնք ինձմէ խլուէին ալ, տակաւին անոնք իմ յաւիտենական անկորնչելի ստացուածքս էին :

Աքսորէն վերադառնալէս վերջը երկրորդ անգամ ծնողքս զիս վռնուցին ամէն բանէ զրկելով, հազիւ հազ անգրքէն Ս. Գիրքս եւ Քրիստոսիանոսի ճամբորդութիւնը կրցի ազատել : Բարեկամներուս ըսի ամէն բանէ զրկուեցայ Յիսուսի սիրոյն համար, բայց Աստուած ինձի երկու գէնք թողուց սրտնցմով պիտի պատերազմիմ մինչեւ վերջը եւ այն դիմաւորը որ այս գէնքերով կը մարտնչի միշտ աւելի յաղթող պիտի ըլլայ, թէեւ երբեմն ալ պարտութիւններ կրէ : Սակայն այս պարտութիւնները յաղթութեան եռանդը կ'աւելցնեն միայն :

(Շար.)

ՄԱՆԿԱՆՑ ՍԻՒՆԱԿ

ԽՆԴԱԾԱՂԻԿԻՆ ԴԱՍԸ

Խնդածաղիկի պզտիկ տունի մը կար պարտէզի մը մէջ : Ամառն ի բուն անիկա իր կանառ տերեւները բարձր բռնած էր, եւ գեղին կեղտերով շրջապատուած ծիրանեղոյն բողբոջներ հաւանած ցուցուցած էր տաք օդին եւ արեւին : Հիմա ցուրտ Հոկտեմբերը եկած էր, թռչունները ամբողջ թոսած գացած էին հարաւի երկիրները : Կծու հով մը ծաղիկներու պարտէզին մէջէն փչել

սկսաւ : Տունկին վրայ մէկ բողբոջ մնացած էր, եւ անոր վրայ ալ մէկ ծաղիկ միայն :

Պզտիկ խնդածաղիկը զողզողաց, եւ ջանաց իր ծիրանեղոյն ծաղիկովը ցուրտէն պաշտպանուիլ. շատ յոգնած էր, նաեւ կ'ուզէր քնանալ : Սկսաւ լալ, եւ «Ո՛հ» ըսաւ, «Երանի թէ աւելի տաք հանդերձ մ'ունենայի» :

Ճիշդ այս պահուն, հարաւի հովը փչեց շատ ուժգին. մէկ անգամ, երկու անգամ, եւ խնդածաղիկին միտի հանդերձը եղող ծիրանի ծաղիկը առաւ տարաւ ցանկին մէկ անկիւնը :

«Ո՛հ, հիմա՞ ինչ պիտի ընեմ», զոչեց խնդած պզտիկ խնդածաղիկը. «Իմ գեղեցիկ հանդերձս գնաց, եւ ո՛հ որքան ցուրտ է, որքան ցո՛ւրտ» :

«Հոգ մ'ընեք, պզտիկ խնդածաղիկ», ըսաւ կաղնիի խոշոր տերեւ մը քովի ծառէն խնալու՛ք, «Տես, ես եւ իմ եղբայրներս եւ քոյրիկներս կուգանք կը ծածկենք քեզ տաքուկ եւ ապահով, եւ դուն կրնաս քնանալ : Դու խնդածաղիկի պզտիկ սրտիդ խորը, խորը, պըտըտիկ սերմեր կան. անոնցմէ ամէն մէկը գեղեցիկ տունի մը պիտի ըլլայ եւ բողբոջներ արձակէ, այնքան գեղեցիկ որքան դուն էիր, երբ դեռ գեղին եւ ծիրանի հանդերձը վրայ էր. մարդիկ պիտի գան քաղեն այդ ծաղիկները եւ քեզ միտքերնիս պիտի բերեն» :

«Բայց ի՞նչպէս կրնան մեծնալ այդ սերմերը, այս ցուրտին կը մեռնին», ըսաւ պզտիկ խնդածաղիկը աւելի քիչ զողզալով, սրովհետեւ կողնի տերեւները զինք ցուրտէն կը պաշտպանէին :

«Այս ցուրտը պիտի անցնի եւ նորէն տաք պիտի ըլլայ», փափուցին կամացուկ մը կաղնիի տերեւները. «Խոտը նորէն պիտի բուսնի, ծաղիկները նորէն պիտի բողբոջին եւ ծառերուն վրայ մեր տեղը նոր տերեւներ պիտի լեցունին : Եկու՛ր, պզտիկ խնդածաղիկ, եկու՛ր քնացիր, եւ քու սրտիկիդ մէջէն ծնանալիք գեղեցիկ ծաղիկներուն վրայ երազէ» :

Ասոր վրայ պզտիկ խնդածաղիկը տաքուկ, անուշ բան մը զգաց իր սրտին մէջ, եւ տեսաւ որ կաղնիի տերեւներուն ըսածը ճշմարիտ էր : Անիկա հիմա այնքան ուրախ էր՝ որ խնդումէն իր պզտիկ սիրտը բացուեցաւ եւ սերմիկները ամէն կողմ տարածուեցան :

Կաղնիի տերեւները տաքուկ մը ծածկեցին այս սերմերը, այնպէս որ հարաւի հովը չկրցաւ փչել անոնց վրայ, եւ պզտիկ խնդածաղիկը այս տերեւներուն ներքեւ քնացաւ : Իր կեանքին գործը վերջացած էր :

Յետոյ եկաւ կախուղ, ճերմակ ձիւնը եւ ամէն բան ծածկեց. պզտիկ խնդածաղիկը եւ պզտիկ սերմերը քնացան :

Օր մը ձիւնի վերմակէն աւելի տաքուկ բան մը եկաւ, եւ տերեւներուն մէջէն անցնելով իջաւ աւելի վար : Սերմի հատիկները զգացին զայն

իրենց տաք խոնավ անկողինն մէջ, եւ քունը-
նուն մէջ լսեցին անոնց ձայնը տերեւներուն
վրայ, իրենք ալ թրջեցան, բայց տակաւին
չարթնցան :

Քիչ յետոյ տեսան տաք բան մը որ իրենց
հասաւ, այնչափ տաք որ ուղեցին երկնալ եւ
զովանալ, եւ կարծես թէ ձայն մը լսեցին որ
իրենց կ'ըսէր, «Արթնցէ՛ք պզտիկ սերմիկներ,
արթնցէ՛ք, ելէ՛ք» : Ասոր վրայ բոլոր սերմերն
ալ արթնցան, եւ երբ կ'ուզէին քուններին փախ-
ցնելու համար թեւերնին երկնցնել՝ «Փըթ» իրենց
պզտիկ թխազոյն բաճկոնները պատռեցան եւ
անոնց մէջէն դուրս ելան երկու տերեւ - թաթիկ-
ներ, եւ սկսան ելլել, ելլել, մինչեւ որ հասան
արեւին տաքուկ ճառագայթներուն : Այս ճառա-
գայթներն էին որ զիրենք արթնցուցած էին :
Պզտիկ տերեւ - թաթիկները բարձրացան, բարձ-
րացան, մինչեւ որ տեսան խոշոր, կլոր արեւը,
որուն գեղեցիկ լոյսը սկսաւ իրենց վրայ փայլել :
Յետոյ պատռած պզտիկ թուխ բաճկոններէն
պզտիկ արմատներ բուսան եւ թաղուեցան գետ-
նին մէջ, ծծելով օգտակար սնունդները որ գտան
իրենց ճամբուն վրայ : Այսպէս, քանի արմատ-
ները աւելի եւ աւելի խորունկ կ'իջնէին, տերեւ-
թաթիկներն ալ գետնէն վերեւ աւելի եւ աւելի
վեր կը բարձրանային եւ կը մեծնային, մինչեւ
որ իւրաքանչիւր պզտիկ սերմ, գեղեցիկ, կա-
նանչ տունկ մը եղաւ, պըտըտիկ կանանչ կո-
կոններով, որոնք բացուեցան եւ ծիրանեզոյն ու
լեւմնի գոյն ծաղիկներ տուին ճիշդ այն գեղեցիկ
խնդածաղիկի բողբոջին նման, որը այս սերմերը
իր սրտիկին մէջ պահած էր, եւ անոնց ծնունդ
տուած, նոյնիսկ իր քնանալէն ալ շատ ետքը :

Խնդածաղիկին այս պատմութիւնը քու աղ-
գիդ պատմութիւնն է Հայ պատանի, նախնիքդ
մեռան, ազգիդ բեկորները ցրուեցան երկրէ եր-
կիր : Բայց խնդածաղիկին թափուած հոնաւորը
մօրը արժանաւոր յաջորդներ ծնան : Լուսաւորի-
չի, Շնորհալիի, Նարեկացիի արժանաւոր դա-
ւա՞կն ես : Յիսուս կը կանչէ՝ գբեզ այսպէս ըլ-
լալ : Անգամ մըն ալ կարգա խնդածաղիկին պատ-
մութիւնը :

ԱՍՏՈՒԱՇԱՇՈՒՆՁԸ

Աստուածաշունչը աշխարհի վրայ գտնուած
բոլոր միւս զրքերէն տարբեր բան մըն է :
Անոր հեղինակը Յաւիտենական Աստուածն է :
Մէկը որ Անոր մէկ մասին կը հաւատայ ստիպ-
ուած է նաեւ Անոր ամբողջութեանը հաւատալ :

Սուրբ Գիրքը, կատարելապէս իմաստուն,
անհունապէս մեծ, եւ հովին Սուրբ Աստուծոյ
մը կամքին եւ նկարագրին յայտնութիւնն է :

Մարդիկ որքա՛ն յաճախ այրած են Սուրբ
Գիրքը. շատեր իրենց օրերը անոր կործանման
եւ անհետացման համար աշխատելով անցու-
ցած են : Բայց անիկա այսօր աշխարհի բոլոր
գիտութիւններէն եւ իմաստութիւններէն աւելի
պայծառ կը շողայ :

Ան դիմադրած է դարաւոր հալածանքներու
եւ այսօր ուրիշ որ եւ է գրքէ աւելի կը շրջա-
բերի :

Անիկա այն միակ Գիրքն է որ հոգւոյն խա-
ղաղութիւն, հանգստութիւն, եւ փրկութիւն կը
բերէ :

Անով է որ ամէն մարդ պիտի դատուի
Դատաստանին Մեծ Օրուան մէջ :

ԹՈՒՐԿԵՐԷՆ ՄԱՍ

ԱԶԸԳ ՄԷՔԹՈՒՊ

ԲԱՊՊՏԱ ՍԷՎԻԻԻԼԻԻ SOUԹԼԱՐ

Սօսուող համալար Ալլահըմա քի, տիւշկիւն
ինսանը գուրթարմաղա պէօլէ գիւլըյմէթ խէ-
լասքեար պուլմուշ քի, օնուն զըյմէթինի նէ
ինսան, նէ մէլաիք պէյանա գասիր տիր : Պէս
Ապիզ Բուհա աիտ տիր, Յիսուս Բրիթիսսըն նա-
սըլ զըյմէթի պիր Փրկիչ խալիլինի ինսանա
պիլաիրմէք : Լաքին հէր պիր սահիհ քրիթիւս-
նըն իւք վէ մութլազ Ֆարզը Յիսուս Բրիստուս
հազգընսա տիրի պիր շէհատէթ վէրմէք :

Օնու էթմէք իւզրէ պու նամէյի եազմաղը
գարար էթտիմ, չիւն օնտան տահա խայրը պիր
իշ էտէմէմ : Պէս տաիի պօզուլմուշ ինսան թա-
պիթընսա օլարազ տիւնեայա կէլտիմ, այնի
պօզուլլուզ պէնտէ տաիի աչըզճա մէվճուտ
իտի, լաքին տիւնտար վալիաէյնին տուսպը սա-
յէսիտէ, Ալլահըն խուսուսի ինայէթիլէ 12 եա-
շընտա իքէն, բուհ չօզ աճաիպ սուրէթտէ պէնտէ
իշլէյէրէք, սօն տէրէճէ իւմիւտսիւզ պիր կիւ-
նահքեար իաիլիմի աչըզ պիլաիրտի : Թէվպէմին
նէ տէրէճէ ճիտաի իաիլի տիլ իլէ տէնիլմէզ,
Փիդան, Փէրեատ ճիհանլարը տօլտուրտու, սըդ-
լէթ թէրիմ եաթաղմտան քիլիմ հասիրէ կէչիպ
ըալթալ, օրուճ տուալարըմ սէմայատէք էրիշ-
տի : Էնճամ պու իւլասքեար աճըյարազ իւլաս
լութֆուլու. պախշ էթտի : Օ միւտաէթտէ վու-
զու պուլան վազաալարը եազմաղ միւմքին
օլսա, թէքմիլ պիր քիթապ օլուր : Շու նամէտէ
մազոէտ օ օլմայըպ, իլլա Յիսուսուն զըյմէթինի
ալէմէ պէյան էթմէք տիր, թա քի հէր իշիտէն
օ Փրկիչին զըյմէթինի պիլէրէք Օնա կիտէ, Օն-
տա բահաթ պուլա :

Կիւնասէլ պիւր իլլէթ սայալըմ, քի հէր ճան օնուն հղիւ չիւրիւտիւնիւ թէսիւրի ալթընտա էնճամ հէլաք օլուլօր : Ինսանըն էն պէօյիւք ճէհտի պու կիւնաս իլլէթիւտէն գուրթուլմազ իւզըէ էթթիւի ճէհտի տիւր. Օ օն պիւր ֆարզը իւաճլար արար, հէփսիւնիտէ քէմալը վազարլա իճրայա գօր : Օ, Մարկոս է. Ձեռաքի վարըյա պէնդէր, իմտի էն պաշ մազսէտիւմ հէրքէսի նա- ֆիլէյէ օլուն շու գահմէթտէն գուրթարմազ տըր : Տօթլար պունա թէքմիլ ինանըպ պօշունա չա- պալամայըն, չիւն էտիլէն մէսարիֆ էմէյիւնիզ պիւն պիւթիւն պօշա : Իլք ֆուրսաթլէ պու Տօթլար կիտիւպ, պէս հալիւնի աչըզճա պիւտիւր, վէ պէնի շու չարէսիզ իլլէթտէն գուրթար տէ : Պիւր սէօզիւ իլէ Օ սէնի թէքմիլէն սաղալտըր : Օնուն վէրտիլի բահաթլըզ օ գատար վըյմէթլի քի պէս մալիք օլուն պիւթիւր, պիւր ալէրիւն օնու անկաւտամազ. ճէստճէ իլլէթտէն գուրթուլուն պիւթիւր քի իւզէրիւտէն պիւր տազ ալէրիւտի, լաքիւն պու լունա ախտ իլլէթտէն գուրթուլուն սիւրուրունու տէյմէզ, չիւն օ տէնիլէմէզ : Էյ տօթլար, ճիւսիմին սէֆիլ հալիւնտէ զայէթ իւլ զայէ աճընլօրում, անկալօրում քի չօզլար Յի- սուսա կիտէճէք եւրտէ, եանկիւլ եւրէրէ կիտի- յօրլար, չօզլար քիլիսայա տէվաճէթլէ կիթմէքլէ ճիտտի տուա էթմէքլէ գուրթուլուրում սանլօր, պօշունա եօրուլուլօր, օնլարլա պիւր ճան գուր- թուլմազ, գուրթուլմաճըն պէս պիւր չարէսի վար : Տիւրի Բըրիսթոսա կիթմէք, թէքմիլ թէս- լիմիլէթլէ Յիսուսա աթըլմազ, պրազմազ քի Օ սէնտէ նէ աճէլիլաթ էտէրսէ, օնա լազի օլմա- լընըն, թէքմիլ մանատա Օ սէնտէ էտէճէյի աճէ- լիլաթլէ էթմէլի. պէն պու աճը իլաճը իչէմէմ, պու չիւրիւք տիլլէրի չէքտիլէմէմ եւն. տէմէ- մէլիսին : Տօթլարուն հէր թէքթիւլէրիւնէ, նէ գատարտա կիւն կէօրիւնսէ, բազի օլմալընըն : Պու չօզ կէնիլ մատտէ, պա թէճըրիւպէ էյի պի- լիլօրում քի չօզլարըն խէլաա պուլմազ իսթէմէ- մէսի, պու նէվ կիւնիւքլէրէ տայանմազա նիյէ- թի եօզ. Յիսուսա թաթլը շուրուպ վէրիւսէ իչէ- ճէք, աճը իլաճա նիյէթի եօզ, Կէօզիւնիւ օյտուր- մազա, էլ եա այազընը քէստիւլմէյէ հիչ նիյէթի եօզ Յիսուսա օնտան մատա չարէ պուլմա- յօր, չիւն օնլարըն սաղալմասընա չարէ եօզ, քէսիլիս աթըլմալը : Կիլին տ աթլար պունու տէրին տիւլիւնիւպ Տօթլար թէքմիլ թէսլիմ օլուն, Յիսուսա պիլի նէֆատէն, տիւնեատան, այլըմազալը Ազիզ էտէմէզ, Ազիզ էթմէքսիզտէ ճէնէթլէ ալամազ : Իմտի սէմատան կէլմիլ պու Տօթլար իթաթ էտիւն քի կիւնաստան գուր- թուլաւընը : Սէլալար.

ԱՅՐԱՀԱՄ ԼԵՒՈՆԵԱՆ

Այնթապ

ՀէՐ ՔԵՍԻՆ ՕԳՈՒՅԱ ՊԻԼԵՃԵՅԻ ՊԻՐ ՔԻԹԱՊ

Պիւր ճափանդու խրթիւնլըզ հազգընտա իշիմիլ վէ չօզ միւթէտիւր օլմուլ խի, լաքին ֆիթալը Մուգատ- տէստէ եազըլուն հազգաթլարըն աճէլի էօփտէ եաշա- նըլա պիլիլ խիլինէ տալի ֆիթրինտէ պէօյիւք շիւպիէ վար խի : Խրիւնիլան էօփիւ քէնալինէ եաշանմալ միւթիւնիւզ պիւր շէյ կիլի կէօրիւնիլօր խի :

Կիւնիւն պիլիւնտէ պու ճափանդու պէօյիւք թիւճճար թիւճարէթ մագսէտիլէ Ձիւնի Շանքօնի շէհրինէ կիթալի : Կիւր քաջ հաֆիւս սօնրա կէրի մէմէքէթիւնէ տէօնէր իթէն օլտուղու վափորտա Միւ Պէրօ խալիւնտէ պիւր միւթնար գատըն տալի պուլունիւգատա խի : Պու ճափանդու օլ գատըն պիւր քրիսիւն օլտուղունտ անկալտըղնտա քրիսիւք կէօլիւր իլէ անր սիւքիւնէ թէֆիլէ էտէրէք, ճէր եափորընը կէօզէթմէյէ պաշլտըր : Միւ Պէրօ սա- տէ վէ չօզ ալիգաթ ճէլա էթմէյէն պիլի խի, լաքին մէրգումէ իլէ թէմասա կէլէն ճէր ֆէրտ անըն նէֆսին. քեար էօփիւնտէ թէֆսիւր գապուլ էթմէքէք էտէմէզ խի, էվլէթ անըն մուհապէթլէ տօլու, սիւքիւն վէ ֆէտաքեար էօփիւ, անր մէյզ էթմէքտէ օլուն պու ազըլը ճափան- լունտա տալի կիլի գալմալը : Հէր նէրէտէ եարարմա իյիլիլաճ վար խի խէ օրա եթիլիլ, մափանլարը թէ- սէլլի էտէր վէ սափիսիլէրէ մուգայէտ օլտըր խի : Վափորտա պիւր չօճուգ ափանլար աղըր խաւմա օլտու, Միւ Պէրօ պիւնիւն կէճէ անըն եանընտա պէքլէտի :

Պու թիւճճար Միւ Պէրօ իլէ ուզուն պիւր գօնուշուգ- տան սօնրա, մէրգումէ իլէ եօզօհամաշա չըգալըղնտա զաթէն խրիսիւն օլմալա տալի գալարընը վէրմիլ խի վէ վափիւլ օլմալա Բապըն հազգի պիւր շափիսի վէ սալալը պիւր շափիսի օլտու :

Լիօն

Միւթ. Ե. Պ.

Ի Լ Ա Ն

«Բանրեր»-ին սէնէ պաշըր Ապրիլ խէտէ, 4ճիւ սէ- նէսինի Յունիարտա պաշլայա պիլմէք իբիւն, Ալլահի իս- թէրսէ էօնիւ միւգտէքի 9 ալ զարֆընտա «Բանրեր»-ի ճէր 3 հաֆիւստա պիւր նէշը էտէրէք Յունիարտ գատար 12 նուսին չըգալմալա չալըշաճալըզ :

ՁԱՆԱՁԱՆ ԼՈՒՐԵՐ

Հոգեւոր գործը Լիօնի եւ շրջակայքի մէջ.—

Լիօնի հայ գաղութին մէջ հոգեւոր գործը Օգոստ. 2, 1924 ին սկսաւ :

Մարտէյլ ապաստանող հայ գաղթականներու աւանդ հոն չկրնալով պատասպարուիլ, սկսած էին երկրին ներսերը տարածուիլ : Լիօն եւ շրջա- կայքը ճարտարարուեստական տեսակէտով Յրանսայի շրջ. մեծ կեդրոնը ըլլալով մեզ զաղ- թականներու համար լաւ գաղթավայր մը եղած է : Ասկէ երկուք ու կէս տարի առաջ Լիօնի մէջ 800 ի չափ հայուլթիւն մը կար, բայց հիւմա 4000 էն աւելի կը հաշուուի :

Action Chrétienne en Orient ի տնօրէն Տօք. Պէրբօն կանխատեսելով որ Լիօն եւ շրջակայքը հայութեան համար մեծ կեդրոն մը պիտի ըլլայ, սրբեց սր Մարտէշլէն վերջ Լիօնն ալ Աւետարանչական շրջ. կեդրոն մը ըլլայ : Այս նպատակին իրագործմանը համար ստորագրեալս հոս զրկեց եւ Տէրօշը օգնութեան ապաւինելով՝ Օգոստ. 2, 1924 ի Կիրակին մեր առաջին քարոզածողովը տեղի ունեցաւ Place Vendôme ի Միթոտական մատուոն մէջ : Առաջին ժողովին մէջ ներկաները 16 հոգի էին. այս ժամանակէն ի վեր մեր քարոզածողութիւնը ամէն Կիրակի ժամը 2 ին միեւնոյն մատուոն մէջ տեղի կ'ունենայ եւ ներկաներու թիւը 40-60 է : Հոս հայ Աւետարանականներու թիւը մեծ ու պզտիկ 100 ի կը հասնի :

Քարոզածողութիւնէն զատ հետեւեալ հոգեւոր պաշտամունքները ունինք.— Կիրակի առաւոյ ժամը 9 ին մանուկներու համար կիրակնօրեայ դպրոց 75, Ave. Berthelot ի մէջ : Նոյն օրը ժամը 10 ին երիտասարդուհիներու համար Սր. Գրոց դաստիարակութիւն մեր բնակարանը 18, Rue du Dr. Rebatal : Ժամը 10,30 ին Տէսին (Décines) մօտակայ դիւղ մը, Պր. Կարպիս Զաֆէրեանի շէնքին մէջ քարոզածողով մը եւ կէսօրէ վերջ ժամը 5.30 ին աղօթածողով մը քարոզէն անմիջապէս վերջ մատուոն մէջ :

Գ. շաբթի կէսօրէ վերջ ժամը 3 ին կանանց համար աղօթածողով մեր բնակարանը : Դ. շաբթի երեկոյեան ժամը 7.30 ին քարոզածողով մը 15, Rue Jeanne d'Arc : Ե. շաբթի երեկոյեան ժամը 8 ին աղօթածողով մը հայ Ե. Ք. ընկերութեան սրահին մէջ 75, Ave. Berthelot : Շաբթի իրիկուն ժամը 8 ին հայ Ե. Ք. ընկերակցութեան ժողովը 75, Ave. Berthelot : Ընկերակցութիւնս ունի նաեւ փոքրիկ մատենադարան մը :

Լիօնի շրջակայքին մէջ հոգեւոր պաշտամունքները հետեւեալ կերպով կը կատարուին.—

Սէն Շամօն (St. Chamond) Լիօնէն 46 քիլօմէթր. մօտաւորապէս 1500 հայութիւն ունի : Ամէն Կիրակի կէսօրէ վերջ ժամը 2 ին տեղւոյն զատ սրահին մէջ քարոզածողով մը կը կատարուի Bible Woman Տիկ. Աննա Զալլմանի առաջնորդութեամբ : Ներկաներու թիւը 40-50 կ'ըլլայ : Ունին նաեւ Դ. շաբթի իրիկունները աղօթածողով միեւնոյն սրահին մէջ : Տիկ. Զալլման երկու շաբթի մը անգամ մը Լօրէթ (Lorette) ալ կ'այցելէ եւ հոն աղօթածողով մը կը կատարէ : Ստորագրեալը ամիսը անգամ մը հոն կ'այցելէ եւ աղօթածողովի մը կ'առաջնորդէ :

Փօն տը Շէրուի (Pont de Cheruy) 26 քիլօմէթր, 300 հայեր : Կրամօնի գործարանատէրը հայերու իրենց պաշտամունքը կատարելու համար Maison Neuve ի մէջ սենեակ մը յատկա-

ցուց ուր ամէն Կիրակի կէսօրէ վերջ ժամը 3 ին քարոզածողով մը տեղի կ'ունենայ : Լիօնաբնակ Պր. Լ. Նիկողոսեան ամիսը 2-3 անգամ քարոզածողութիւններուն կամաւոր կերպով կ'առաջնորդէ. միւս Կիրակիներն ալ զրաձախ - աւետարանիչ Պր. Յ. Մուսեան ու ստորագրեալս կ'առաջնորդենք : Հոս քանի մը շաբթի ի վեր սկսած է քարոզածողութիւն վերջ աղօթածողով մըն ալ տեղի ունենալ :

Սէն Էթիէն (St. Etienne) Լիօնէն 58 քիլօմէթր, 600 հայեր : Ամէն Կիրակի պաշտամունքներ կը կատարուին կամաւոր առաջնորդութեամբ Պր. Գ. Սարայտարեանի :

Վիէն (Vienne) Լիօնէն 52 քիլօմէթր : Ամիսը անգամ մը քարոզածողով մը տեղի կ'ունենար շաբթի ամէջ եւ երեկոյեան ժամը 8 ին Պր. Ս. Բալատուրեանի բնակարանը ու հետեւեալ առտուն ալ աղօթածողով մը Փասպալի շէնքին մէջ : Բայց երկու ամիսէ ի վեր տեղւոյս Ս. զրաձախ Պր. Յ. Մուսեան ամիսը անգամ մը Կիրակի օրը կէսօրէ վերջ ժամը 2 ին ալ Փասպալի շէնքին մէջ քարոզածողութիւններուն կ'առաջնորդէ : Յոյս ունինք որ ասկէ վերջ հոս 15 օրը անգամ մը ժողովներ կատարելու կարգադրութիւնը պիտի յաջողի : Վիէնի մէջ 700 հայեր կան :

Յիշեալ տեղերէն զատ այս շրջանին մէջ կը գտնուին հետեւեալ վայրերը ուր հայեր կը զբաւնուին.— Villefranche, Tarare Բարիգի ուղղութեամբ. St. Alban, la Grive, Virieu-sur-Bourbre, Lancey Կրնօպլլի ուղղութեամբ. St. Valier եւ La Roche Taillé Մարտէշլի ուղղութեամբ եւ Bourg-Argental որոնց ստորագրեալս ժամանակի նուազութեան պատճառաւ կրցեր է ոմանց անգամ մը ու ոմանց ալ քանի մը անգամներ միայն այցելութիւններ կատարել :

Այս շրջանի մէջ հոգեւոր դործը տկար ըսկզբնաւորութիւն մըն է. ճշմարիտ հաւատացեալներու թիւը շատ քիչ է : Միեւնոյն ատեն միջավայրը, գործարանային կեանքը եւ ի մասնաւորի Լիօնի մասին խօսելով քաղաքի մեծութիւնը եւ հայերու ցրուած ըլլալը գործը կը դժուարացնեն : Բայց հաւատքով Աստուծոյ կը խնդրենք որ իր հոգիով մեզ այցելէ եւ այս դժուարութիւններուն մէջ իր գործը յառաջ տանի :

Այս առիթը կարգացող Աստուծոյ զաւակներէն կը խնդրենք որ մեզի համար աղօթող ըլլան եւ հունձքի Տէրօշը աղաչեն, որ իր հունձքին համար ուրիշ մշակներ ալ զրկէ :

Յ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

Լիօն, Փետր. 16, 27.

Le Gérant : PASTEUR KALTENBACH

Տպգր. Ա. Երեյեան, 40, Բիւ տէ Տօմինիքն - Մարտէշլ